ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի բազմահազարանոց հավաքածուի բաղկացուցիչ մասերից է նաև Նոր-Բայազետի եկեղեցապատկան ձեռագրերի հավաքածուն, որը իր ներկա վիճակում ամփոփում է XIV—XIX դարերում ընդօրինակված հինգ տասնյակից ավելի արժեքավոր ձեռագրեր։

Մեսրոպ Սմբատյանցը, որը հոգևոր գործակալի պաշտոնով 1862 թ. հունիսին այցելել է Նոր-Բայազետ և համառոտակի ցուցակագրել քաղաքի Ս. Կարապետ և Ս. Աստվածածին եկեղեցիների խորաններում պահվող ավետարանները, նշում է, որ այդ ձեռագրերը սկսել են հավաքվել 1830 թ. գաղթի կազմակերպիչներից մեկի՝ Մկրտիչ Արծրունու եղբոր՝ Բարսեղ Արծրունու մասնավոր հոգածությամբ[1]։

Անտարակուսելի է, որ այդ ձեռագրերը, եթե ոչ ամբողջությամբ, գոնե ճնշող մասով, նորաբնակները բերել են իրենց նախկին բնակավայրից՝ Հին-Բայազետից։ Դրանց մի մասը, անշուշտ, եղել է եկեղեցապատկան, իսկ մի մասն էլ մասնավոր անձանց սեփականություն։ Հետևապես, այս հավաքածուն իրականում ավելի շուտ Հին-Բայազետի հավաքածու է, քան Նոր-Բայազետի։

Հավաքածուն իր անկախ գոյությունը պահպանել է ամբողջ մեկ հարյուրամյակ (1830—1931)։ Այդ ընթացքում հավաքածուի ձեռագրերը մերթ ավելացել են, մերթ նվազել, փոխադրվել եկեղեցուց եկեղեցի, ոմանք ընկել այլ գրատներ, ոմանք դարձել մասնավոր անձանց սեփականություն, իսկ երեք տասնյակից ավելին էլ անհետ կորել է։

1931 թ. հոկտեմբերի 25-ին հավաքածուի մնացած ձեռագրերը (թվով 39 միավոր) հնագետ Սեդրակ Բարխուդարյանի անմիջական ջանքերով փոխադրվում են Երևան և մուծվում գրական թանգարանի հավաքածուի մեջ (№№ 1229—1267)[2], իսկ այնտեղից էլ 1938 թ. վերջերին վերջնականապես հանգրվանում Մաշտոցի անվան Մատենադարանում (տե՛ս տախտակ Զ)։

Հրապարակի վրա կա Նոր-Բայազետի ձեռագրերի երկու ցուցակ։ Առաջինը կազմել է Մեսրոպ Սմբատյանցը 1862 թ., իսկ երկրորդը՝ Հրաչյա Աճառյանը 1906 թ.։ Սմբատյանցի ցուցակը լույս է տեսել 1896 թ. «Գեղարքունիի» էջերում[3], իսկ Աճառյանի ցուցակը նախ՝ 1909—1913 թթ. «Հանդես ամսօրյայում», ապա՝ 1924 թ. առանձին գրքով[4]։

Ստորև անդրադառնում ենք այդ զույգ ցուցակներին։

1. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊ. ՍՄԲԱՏԵԱՆՑ, ՑՈՒՑԱԿ ՁԵՌԱԳՐԱՑ ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻ

Ա. Ցուցակում Ա—ԻԸ (1—28) թվահամարների տակ համառոտակի նկարագրված են Ս. Աստվածածին եկեղեցու 28 ավետարաններ[5]։ Այդ 28 ավետարաններից 12-ը (№№ 1—4, 6, 12—15, 18, 20, 23) այսօր գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, իսկ մնացած 16-ի (№№ 5, 7—11, 16, 17, 19, 21, 22, 24—28) ուր գտնվելը մեզ հայտնի չէ։

Երբ 1906 թ. Հ. Աճառյանը կազմում էր Նոր-Բայազետի ձեռագրերի իր ցուցակը, Սմբատյանցի արձանագրած այդ 28 ավետարաններից տեսել ու նկարագրել է միայն 9-ը, ըստ որում 8-ը (№№ 1, 2, 12, 14, 15, 18, 20, 27) Ս. Աստվածածին եկեղեցում, իսկ 1-ը (№ 13)՝ Ս. Կարապետ։ Մնացած 19 ձեռագրերը (№№ 3—11, 16, 17, 19, 21—26, 28) Աճառյանը չի տեսել և չի նկարագրել։

Աճառյանի ժամանակ բացակայող այդ 19 ձեռագրերից 3-ը (№№ 3, 4, 6) նկարագրված ենք գտնում Սևանա անապատի ձեռագրերի՝ Մառի կազմած ցուցակում[6] (համապատասխա-

---

1 Մ. Սմբատյանց, Տեղեկագիր Գեղարքունի ծովազարդ դավառի..., Վաղարշապատ, 1896, էջ 53։

2 Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, № 15։

3 «Գեղարքունի», էջ 46—53, 62—63։

4 Հ. Աճառյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Բայազէտի, Վիեննա, 1924։

5 «Գեղարքունի», էջ 46—53։

6 Ն. Մառ, Ցուցակ համառօտ ձեռագրաց վանուց Սևանայ, Մոսկվա, 1892։

նաբար № № 29, 17, 7), իսկ 1-ը (№ 23)՝ էջմիածնի նախկին գրատան «Գևորգյան» կոչվող հավաքածուի գույքամատյանում[7] (№ 1300)։ Այդ 4 ձեռագրերն էլ Ս. Աստվածածին եկեղեցուց հանել է անձամբ Մ. Սմբատյանցը[8], երեքը նույն 1862 թ. հանձնել Սևանին, իսկ վերջինը երկար ժամանակ պահել է իր մոտ և միայն 1910 թ. փոխանցել էջմիածնի գրատանը։

Այսպիսով, Սմբատյանցի նկարագրած 28 ավետարաններից 1906 թ. արդեն կորել էին 15-ը (№ № 5, 7—11, 16, 17, 19, 21, 22, 24—26, 28), իսկ մեկն էլ (№ 27) կորել է Աճառյանի կողմից նկարագրվելուց հետո։

Առկա 12 ձեռագրերից մեկը (№ 23), ինչպես տեսանք, Մատենադարան է մուտք գործել 1910 թ. Մ. Սմբատյանցի միջոցով, 3-ը (№ № 3, 4, 6)՝ 1910 թ. Սևանա անապատի հավաքածուի կազմում, 1-ը (№ 13)՝ 1938 թ. Երևանի պետական համալսարանի մի շարք ձեռագրերի հետ միասին, իսկ մնացած 7-ը (№ № 1, 2, 12, 14, 15, 18, 20) ստացվել են 1938 թ. գրական թանգարանից (տե՛ս տախտակ Ա)։

Ա. Համեմատական տախտակ Նոր-Բայազետի Ս. Աստվածածին եկեղեցու ձեռագրերի հին և նոր թվահամարների

(Ըստ Մ. Սմբատյանցի 1862 (1896) թ. ցուցակի)

Ս. Ա.ծ.	Մատենադրն	Ս. Ա.ծ.	Մատենադրն	Ս. Ա.ծ.	Մատենադրն	Ս. Ա.ծ.	Մատենադրն
1	8468	8	—	15	7756	22	—
2	7772	9	—	16	—	23	3843
3	8253	10	—	17	—	24	—
4	3989	11	—	18	7776	25	—
5	—	12	7771	19	—	26	—
6	4096	13	8897	20	7621	27	—
7	—	14	7563	21	—	28	—

Բացակայող ձեռագրերն են[9].

№ 5. Աւետարան— վերանորոգված և կազմված է ՌԼԴ (1585) թվականին Խառաբաստա վանքում, Կարապետ եպիսկոպոսի ձեռքով։

№ 7. Աւետարան— գրված մագաղաթի վրա բոլորգրով և զարդարված ոսկեզօծ խորաններով ու պատկերներով։

№ 8. Աւետարան—գրված թղթի վրա, ՌՃԻԹ (1680) թվականին Վան քաղաքում, Սահակ քահանայի ձեռքով։

№ 9. Աւետարան— գրված թղթի վրա, ՌՂԹ (1650) թվականին Վան քաղաքում, Թադեոս քահանայի ձեռքով։

№ 10. Աւետարան— գրված թղթի վրա, ՌՃԺԱ (1662) թվականին Ավանց գյուղում, Վարդան սարկավագի ձեռքով։

№ 11. Աւետարան— արծաթապատ, գրված թղթի վրա, ՉԺԱ (1462) թվականին, Տյուրիկ քաղաքում Զաքարիա քահանայի ձեռքով, Ներսես եպիսկոպոսի համար։

№ 16. Աւետարան— մեծադիր, գրված թղթի վրա։

№ 17. Աւետարան— գրված թղթի վրա, Սուլթան Մուրատի ժամանակ, Հովհաննես աբեղայի ձեռքով, Գրիգոր եպիսկոպոսի համար։

№ 19. Աւետարան— միջակ դրութեամբ, գրված թղթի վրա։

№ 21. Աւետարան— միջակ դրութեամբ, գրված թղթի վրա։

№ 22. Աւետարան— միջակ դրութեամբ, գրված թղթի վրա։

№ 24. Աւետարան— գրված թղթի վրա, ՌՃԺԱ (1662) թվականին Խոր վիրապում, Մարգարե դպրի ձեռքով, հիշատակ Ջամալին և յուր կողակցին։

№ 25. Աւետարան— գրված թղթի վրա, Ռ (1551) թվականին, Գրիգոր եպիսկոպոսի ձեռքով։

№ 26. Աւետարան— գրված թղթի վրա։

№ 27. Աւետարան—գրված թղթի վրա, ՉԽԲ (1496) թվականին Եղեգյաց անապատում, Աստվածատուրի ձեռքով, Մատթեոս քահանայի համար (սա Աճառյանի ցուցակի Ս. Աստվածածին եկեղեցու № 6 ձեռագիրն է)։

Բ. Ցուցակում Ա—ԺԹ (1—19) թվահամարների տակ արձանագրված է Ս. Կարապետ եկեղեցու 19 ավետարան[10]։ Դրանցից 14-ը (№ № 1, 2, 4, 5, 8—10, 13—19) այսօր գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, իսկ մը-

7 Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, № 4ա։

8 Ձեռագրերի վրա Սմբատյանցը թողել է իր մակագրությունը։

9 Բերում ենք միայն կարևոր տվյալները։

10 «Գեղարքունի», էջ 53—55։

նացած 5-ի (№ № 3, 6, 7, 11, 12) ուր գտնվելը մեզ հայտնի չէ։

Նշված 19 ավետարաններից 1906 թ. Աճառյանը տեսել ու նկարագրել է միայն 16-ը, ըստ որում 15-ը (№ № 1, 2, 4, 5, 8—13, 15—19) արդեն Ս. Աստվածածին եկեղեցում և միայն 1-ը (№ 7)՝ Ս. Կարապետ։ Մնացած երեք ձեռագրերը (№ № 3, 6, 14) Աճառյանը չի տեսել և չի նկարագրել։

Աճառյանի ժամանակ բացակայող այդ 3 ձեռագրերից մեկը (№ 14) հետագայում նորից մուտք է գործել Ս. Աստվածածին եկեղեցին և պահվել այնտեղ մինչև 1931 թ.։

Այսպիսով, Սմբատյանցի նկարագրած 19 ավետարաններից 1906 թ. արդեն կորել էին 2-ը (№ № 3, 6), իսկ երեքն էլ (№ № 7, 11, 12) կորել են Աճառյանի կողմից նկարագրվելուց հետո։

Առկա 14 ձեռագրերն էլ Մատենադարան են մուտք գործել 1938 թ.՝ գրական թանգարանի հավաքածուի կազմում (տե՛ս տախտակ Բ)։

Բ. Համեմատական տախտակ Նոր-Բայազետի Ս. Կարապետ եկեղեցու ձեռագրերի հին և նոր թվահամարների

(ըստ Մ. Սմբատյանցի 1862 (1896) թ. ցուցակի)

Ս. Կրպտ.	Մտնդրն	Ս. Կրպտ.	Մտնդրն	Ս. Կրպտ.	Մտնդրն	Ս. Կրպտ.	Մտնդրն
1	7881	6	—	11	—	16	7869
2	8208	7	—	12	—	17	7824
3	—	8	7882	13	7585	18	7827
4	8535	9	8135	14	7450	19	7870
5	8567	10	8355	15	7546		

Բացակայող ձեռագրերն են.

№ 3. Աւետարան — գրված մագաղաթի վրա, զարգարված ոսկենկար պատկերներով ու խորաններով։ Ստացող Անանիան նվիրել է Պուստի Ս. Ստեփաննոս եկեղեցուն։

№ 6. Աւետարան — գրված մագաղաթի վրա, ոսկետառ գլխագրերով։

№ 7. Աւետարան—գրված մագաղաթի վրա. Ղուկաս քահանայի ձեռքով և զարդարված ոսկեզօծ խորաններով ու պատկերներով (սա Աճառյանի ցուցակի Ս. Կարապետ եկեղեցու № 3 ձեռագիրն է)։

№ 11. Աւետարան — գրված թղթի վրա, Ռ՚ՃԿԵ (1716) թվականին Ղրիմի Կյոզլև քաղաքում, Եղեկիել քահանայի ձեռքով՝ պրն. Նազարեթի համար (սա Աճառյանի ցուցակի Ս. Աստվածածին եկեղեցու № 29 ձեռագիրն է. Աճառյանը թվականը կարդացել է Ռ՚ՃԿԷ (1718)։

№ 12. Աւետարան—գրված թղթի վրա, Ռ՚ՃԿԵ (1716) թվականին Ղրիմի Կյոզլև քաղաքում, Եղեկիել քահանայի ձեռքով՝ Հարությունի համար (սա Աճառյանի ցուցակի Ս. Աստվածածին եկեղեցու № 28 ձեռագիրն է)։

Մ. Սմբատյանցը եկեղեցապատկան ավետարաններից բացի այլ ձեռագրեր չի նկարագրել։ Սակայն Բարսեղ Արծրունու «գրոց ու գրությանց գզրոցի մեջ» տեսնելով մի շարք ձեռագրեր, նրանցից մեկը համարում է «արժանավոր ուշադրության» և նկարագրում[11]։ Աճառյանը այդ ձեռագիրը չի տեսել և չի նկարագրել, որովհետև այն դեռևս անցյալ դարի 80-ական թթ. գտնվում էր Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի հավաքածուի մեջ (№ 43/189)[12]։ Նշված ձեռագիրը 1920 թ. փոխադրվում է Թավրիզ (№ 54)[13], 1922 թ. ուղարկվում էջմիածին («Խառն հավաքածու», № 1702)[14], իսկ այժմ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում 6624 թվահամարի ներքո։

Թե ի՞նչ ձեռագրեր էին Բ. Արծրունու «գրոց... գզրոցի մեջ» եղած մյուս ձեռագրերը, դժվար է գուշակել։ Անշուշտ, դրանցից մեկը պետք է լինի Մատենադարանի № 7756 Ավետարանը, որը Բ. Արծրունին հետագայում նվիրել է Ս. Աստվածածին եկեղեցուն (Աճառյան, № 14)։

Այսպիսով, Մ. Սմբատյանցը 1862 թ. Նոր-Բայազետում տեսել և նկարագրել է ընդամենը 48 ձեռագիր, որից կորած՝ 21, առկա՝ 27։ Այսպես.

---

11 Նույն տեղում, էջ 62—63։

12 Ս. Տեր-Ավետիսյան, Ձեռագիրք Նախավկայի վանաց Դարաշամբի, որ ի Գողթն, 1904 (անտիպ)։

13 Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, № 29բ։

14 Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատ. Ա, Երևան, 1965, էջ 123։

ը/կ	հավաքածու	միավոր	Աճառյան		կորած	Աճառյան		առկա	Աճառյան	
			ունի	չունի		ունի	չունի		ունի	չունի
Ա	Ս. Աստվածածին .	28	9	19	16	1	15	12	8	4
Բ	Ս. Կարապետ . . .	19	16	3	5	3	2	14	13	1
Գ	Բ. Արծրունի . . .	1	—	1	—	—	—	1	—	1
	ընդամենը	48	25	23	21	4	17	27	21	6

2. ՀՐԱՉՅԱՅ ԱՃԱՌՅԱՆ, ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻ[15]

Աճառյանի ցուցակը ստորաբաժանվում է հետևյալ երեք մասերի.

Ա. «Ցուցակ ձեռագրաց Ս. Աստուածածին մայր եկեղեցւոյն»[16]—*Ցուցակում 1—42 թվահամարների տակ նկարագրված է 42 ձեռագիր: Այդ 42 ձեռագրերից 37-ը (№ № 1—5, 7—27, 30—40) այսօր գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, իսկ մնացած 5-ի (№ № 6, 28, 29, 41, 42) ուր գտնվելը մեզ հայտնի չէ:*

Այդ 42 ձեռագրերից Մ. Սմբատյանցը 1862 թ. տեսել և նկարագրել է միայն 23-ը, ըստ որում 8-ը (№ № 3, 6, 10, 14, 15, 18, 20, 30) Ս. Աստվածածին եկեղեցում, իսկ 15-ը (№ № 1, 2, 4, 5, 7, 9, 11—13, 17, 22, 25, 26, 28, 29)՝ Ս. Կարապետ: Մնացած 19 ձեռագրերը (№ № 8, 16, 19, 21, 23, 24, 27, 31—42) Սմբատյանցը չի տեսել և չի նկարագրել:

Առկա 37 ձեռագրերից 35-ը (№ № 1—5, 7—18, 20—27, 30, 31, 33—40) Մատենադարան է մուտք գործել 1938 թ. գրական թանգարանի հավաքածուի կազմում, իսկ մնացած 2-ը (№ 19, 32) Մատենադարանը ձեռք է բերել 1924 թ. մասնավոր մարդկանցից (տե՛ս տախտակ Գ):

Գ. Համեմատական տախտակ Նոր-Բայազետի Ս. Աստվածածին եկեղեցու ձեռագրերի հին և նոր թվահամարների

(ըստ Հ. Աճառյանի 1906 (1924) թ. ցուցակի)

Ս. Աձ.	Մտնդրն	Ս. Աձ.	Մտնդրն	Ս. Աձ.	Մտնդրն	Ս. Աձ.	Մտնդրն
1	8208	12	8567	23	8539	34	7420
2	8355	13	7546	24	8123	35	7374
3	7621	14	7756	25	7827	36	7422
4	7882	15	7563	26	7824	37	7440
5	7881	16	8569	27	8261	38	7561 9797
6	—	17	7870	28	—		
7	7869	18	7772	29	—	39	8058
8	8178	19	6795	30	7771	40	7485
9	8535	20	8468	31	7758	41	—
10	7776	21	8412	32	6214	42	—
11	7585	22	8135	33	7478		

Բացակայող ձեռագրերն են.

№ 6. Ավետարան — *տե՛ս Մ. Սմբատյանցի ցուցակ, Ս. Աստվածածին № 27:*

№ 28. Ավետարան — *տե՛ս Մ. Սմբատյանցի ցուցակ, Ս. Կարապետ № 12:*

№ 29. Ավետարան — *տե՛ս Մ. Սմբատյանցի ցուցակ, Ս. Կարապետ № 11:*

№ 41. Կանոն նշան օրհնելոյ — *թուղթ, 21 թերթ, բոլորգիր, XIX դ.:*

№ 42. Հաշուետետր — *մագաղաթ, 7 թերթ, 1818 թ.:*

Բ. «Ցուցակ ձեռագրաց Ս. Կարապետ եկեղեցւոյն»[17]—*Ցուցակում 1—4 թվահամարների տակ նկարագրված է 4 ձեռագիր: Այդ 4 ձեռագրերից այսօր Մաշտոցի անվան Մատենադարանում են գտնվում միայն 3-ը (№ № 1, 2, 4), իսկ 1-ի (№ 3) ուր գտնվելը մեզ հայտնի չէ:*

Այդ 4 ձեռագրերից Մ. Սմբատյանցը 1862 թ. տեսել ու նկարագրել է միայն 2-ը, ըստ որում

15 *Տպագրված, Վիեննա, 1924:*

16 *Նույն տեղում, էջ 1—41:*

17 *Նույն տեղում, էջ 42—47:*

1-ը (№ 1) Ս. Աստվածածին եկեղեցում, իսկ մյուսը (№ 3)՝ Ս. Կարապետ։ Մնացած 2 ձեռագրերը (№№ 2, 4) Սմբատյանցը չի տեսել և չի նկարագրել։

Առկա 3 ձեռագրերն էլ Մատենադարան են մուտք գործել 1938 թ. մեկը (№ 1) Երևանի պետական համալսարանից, երկրորդը (№ 2) գրական թանգարանից, իսկ երրորդը (№ 4) գնվել է մասնավոր անձից (տե՛ս տախտակ Դ)։

Դ. Համեմատական տախտակ Նոր-Բայազետի Ս. Կարապետ եկեղեցու ձեռագրերի հին և նոր թվահամարների

(ըստ Հ. Աճառյանի 1906 (1924) թ. ցուցակի)

Ս. կրկն.	Մատեն.	Ս. կրկն.	Մատեն.	Ս. կրկն.	Մատեն.	Ս. կրկն.	Մատեն.
1	8897	2	8577	3	—	4	7354

Բացակայում է.

№ 3 Աւետարան — տե՛ս Մ. Սմբատյանցի ցուցակ, Ս. Կարապետ № 7։

Գ. «Ցուցակ ձեռագրաց մասնաւոր անձանց»[18]—Ցուցակում 1—8 թվահամարների տակ նկարագրված է 8 ձեռագիր։ Այդ 8 ձեռագրերից 1-ը (№ 4), որը պատկանել է Մովսես քհ. Տեր-Մովսիսյանին, այսօր գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, իսկ մնացած 7-ի (№№ 1—3, 5—8) ուր գտնվելը մեզ հայտնի չէ։

Այդ 8 ձեռագրերից և ոչ մեկը Սմբատյանցը չի տեսել և չի նկարագրել։

Առկա ձեռագիրը (№ 4) Մատենադարան է մուտք գործել 1938 թ. գրական թանգարանի հավաքածուի կազմում (տե՛ս տախտակ Ե)։

Ե. Համեմատական տախտակ Նոր-Բայազետի մասնավոր անձանց ձեռագրերի հին և նոր թվահամարների

(ըստ Հ. Աճառյանի 1906 (1924) թ. ցուցակի)

Մատեն.	Մատեն.	Մատեն.	Մատեն.	Մատեն.	Մատեն.	Մատեն.	Մատեն.
1	—	3	—	5	—	7	—
2	—	4	7479	6	—	8	—

Բացակայում են.

№ 1. Ժողովածու — թուղթ, 478 թերթ, նոտրգիր, գրիչ՝ Հովհ. Տիվրիկցի։

№ 2. Տոմար և Տաղարան — թուղթ, 179 թերթ, նոտրգիր, ՌՂԶ (1647), գրիչ՝ Աստվածատուր, ստացող՝ Խոճա Ամիրշում։

№ 3. Ժողովածու — թուղթ, 92 թերթ, նոտրգիր, ՌԿէ (1618), գրիչ՝ Դանիել աբեղա։

№ 5. Բառարան — թուղթ, 69 թերթ, նոտրգիր։

№ 6. Տաղարան — թուղթ, 22 թերթ, նոտրգիր, գրիչ և հեղինակ՝ Զաքարիա վրդ. Ռուլասպյան, ստացող՝ Անտոն արքեպս., տեղ՝ Հաղբատ, 1827։

№ 7. Աղօթագիրք—թուղթ, 42 թերթ, գիր՝ խառն, XIX դ.։

№ 8. Աղթարք — թուղթ, 131 թերթ, շղագիր, գրիչ՝ Միքայել որդի Նուպարի։

* * *

Այսպիսով Հ. Աճառյանը 1906 թ. Նոր-Բայազետի եկեղեցիներում ու մասնավոր անձանց մոտ տեսել ու նկարագրել է 54 ձեռագիր, որից կորած՝ 13, առկա՝ 41։ Այսպես.

Ը/կ	հավաքածու	միավոր	Սմբատյանց ունի	Սմբատյանց չունի	կորած	Սմբատյանց ունի	Սմբատյանց չունի	առկա	Սմբատյանց ունի	Սմբատյանց չունի
Ա	Ս. Աստվածածին .	42	23	19	5	3	2	37	20	17
Բ	Ս. Կարապետ . . .	4	2	2	1	1	—	3	1	2
Գ	Մասնավոր	8	—	8	7	—	7	1	—	1
	ընդամենը	54	25	29	13	4	9	41	21	20

18 Նույն տեղում, էջ 48—52։

Այս զույգ ցուցակների վերլուծությունից երևում է, որ Մ. Սմբատյանցն ու Հ. Աճառյանը Նոր-Բայազետի եկեղեցիներում, ինչպես նաև մասնավոր անձանց մոտ տեսել ու նկարագրել են 77 ձեռագիր, որից կորած՝ 30, առկա՝ 47։ Այսպես.

Ցուցակ	միավոր	կորած	առկա
ըստ Սմբատյանցի	48	21	27
հավելյալ Աճառյանի մոտ . . .	29	9	20
ընդամենը	77	30	47

Կամ՝

Ցուցակ	միավոր	կորած	առկա
ըստ Աճառյանի	54	13	41
հավելյալ Սմբատյանցի մոտ . .	23	17	6
ընդամենը	77	30	47

3. ՉԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐ

Բացի վերոհիշյալ 77 ձեռագրերից, մեզ հայտնի են ևս 8 ձեռագրեր, որոնք, սակայն, չեն նկարագրված ոչ Սմբատյանցի և ոչ Աճառյանի ցուցակներում[19]։

Այդ 8 ձեռագրերից 3-ը Աճառյանը հետագայում տեսել է մասնավոր անձանց մոտ և ձեռագրերի մեջ իր ձեռքով նշանակել է 9, 10, 11 թվահամարները, որպես շարունակություն «Ցուցակ ձեռագրաց մասնավոր անձանցի»։ Այդ 3 ձեռագրերից մեկը (№ 11), որը նվիրաբերված է եղել իրեն Կարապետ Տեր-Իսահակյանի կողմից, հետագայում Աճառյանը հանձնել է Նոր-Նախիջևանի թեմական դպրոցի թանգարանին (№ 20)։ 1924 թ. ձեռագիրը բերվել է Երևանի գրական թանգարան (№ 805), իսկ 1938 թ. փոխանցվել Մաշտոցի անվան Մատենադարանին (№ 8610)։ Թե ի՞նչ եղան մյուս 2-ը (№№ 9, 10) և ի՞նչ բովանդակություն ունեին, հայտնի չէ։

Մնացած 5 ձեռագրերից մեկը հնագետ Սեդրակ Բարխուդարյանը գտել է Նոր-Բայազետի Ս. Աստվածածին եկեղեցու ձեռագրերի մեջ և փոխադրելով Երևան՝ հանձնել գրական թանգարանին (№ 1265), որտեղից և ստացել է Մատենադարանը (№ 7763)։ Մյուս 4 ձեռագրերը Մատենադարանը ձեռք է բերել 1953 թ. նորբայազետցիներ Մանվել Մարկոսյանից (№№ 9455—9457) և Իսկուհի Բաղալյանից (№ 9461)։

Այսպիսով, Նոր-Բայազետից մեզ հայտնի ձեռագրերի թիվը հասնում է 85-ի, որից կորած՝ 32, առկա՝ 53։ Այսպես.

Ը/կ	Ցուցակ	միավոր	կորած	առկա
1	ըստ Սմբատյանցի	48	21	27
2	հավելյալ Աճառյանի մոտ . . .	29	9	20
3	չարձանագրված	8	2	6
	ընդամենը	85	32	53

Որպես ամփոփում, ստորև տալիս ենք Նոր-Բայազետի առկա 53 ձեռագրերի թվահամարների հակադարձ համեմատական տախտակը, ուր առաջին սյունակում նշվում են այդ ձեռագրերի արդի, իսկ հաջորդական սյունակներում՝ նախկինում ունեցած բոլոր կարգի թվահամարները։

---

19 Եկեղեցապատկան ձեռագրերի թիվը, ըստ երևույթին, շատ ավելին է եղել, քան արձանագրել են Սմբատյանցն ու Աճառյանը միասին (77—9 մասնավոր = 68)։ Դրա օգտին են վկայում ձեռագրերի վրա տարբեր ժամանակներում նշված թվահամարները, որոնք մի դեպքում հասնում են 183-ի, երկրորդ դեպքում՝ 156-ի, իսկ երրորդ դեպքում՝ 98-ի։ Սակայն այդ մասին կարելի է խոսել միայն համապատասխան գույքամատյանի երևան գալուց հետո։

Զ. Համեմատական տախտակ Նոր-Բայազետի ձեռագրերի նոր և հին թվահամարների

Մատենադարանի	Ս. Աստվածածին			Ս. Կարապետ		սառնավոր			Գեղարդի	Սևան	Ղ. Դաղբաշյան	Գրիգոր	Իսկիսի	Վանքի	Հովհաննես	Գրիգորի Բանդարան
	Մրբատրան	Անարան	Զարդանամ-դիպք	Մրբատրան	Անարան	Մրբատրան	Անարան	Զարդանամ-դիպք								
3843	23	—	—	—	—	—	—	—	1300	—	—	—	—	—	—	—
3989	4	—	—	—	—	—	—	—	—	17	—	—	—	—	—	—
4096	6	—	—	—	—	—	—	—	—	7	—	—	—	—	—	—
6214	—	32	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
6624	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	43/189	54	1702	—	—
6795	—	19	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
7354	—	—	—	—	4	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
7374	—	35	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1258
7420	—	34	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1257
7422	—	36	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1259
7440	—	37	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1260
7450	—	—	—	14	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1266
7478	—	33	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1256
7479	—	—	—	—	—	—	4	—	—	—	—	—	—	—	—	1267
7485	—	40	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1263
7546	—	13	—	15	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1240
7561	—	38	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1261
7563	14	15	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1242
7585	—	11	—	13	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1238
7621	20	3	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1231
7756	15	14	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1241
7758	—	31	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1255
7763	—	—	+	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1265
7771	12	30	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1254
7772	2	18	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1245
7776	18	10	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1237
7824	—	26	—	17	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1252
7827	—	25	—	18	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1251
7869	—	7	—	16	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1234
7870	—	17	—	19	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1244
7881	—	5	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1233
7882	—	4	—	8	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1232
8058	—	39	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1262
8123	—	24	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1250
8135	—	22	—	9	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1248
8178	—	8	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1235
8208	—	1	—	2	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1229
8253	3	—	—	—	—	—	—	—	—	29	—	—	—	—	—	—
8261	—	27	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1253
8355	—	2	—	10	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1230
8412	—	21	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1247
8468	1	20	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1246
8535	—	9	—	4	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1236
8539	—	23	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1249
8567	—	12	—	5	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1239
8569	—	16	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1243
8577	—	—	—	—	2	—	—	—	—	—	—	—	—	—	—	1264
8610	—	—	—	—	—	—	—	11	—	—	20	—	—	—	—	805
8897	13	—	—	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	+	—
9455	—	—	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	—	—	—
9456	—	—	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	—	—	—
9457	—	—	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	—	—	—
9461	—	—	—	—	—	—	—	+	—	—	—	—	—	—	—	—
9797	—	38	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1261

Օ. ԵԳԱՆՅԱՆ